ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 26.11.2020թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/260

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ
Մասնակից՝ «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ռենտգենային սենյակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16727-2020 գրությամբ «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.10.2020թ.-ի գրության հիման վրա, 06.11.2020թ.-ին «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 06.11.2020թ.-ին:

Բողոքներ քննող անձի 06.11.2020թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2020/260 համարի ծածկագիրը:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 26.11.2020թ.-ին:

2. «<u>Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

«Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ն 16.10.2020թ.-ին գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲ ընկերության կարիքների համար 2020թ.-ի սեպտեմբերի 17-ին կազմակերպված ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով շինարարական աշխատանքների մրցույթին հաջորդաբար նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակիցներն են

1-ին տեղ՝ «ԼԵՎՈՆՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

2-րդ տեղ «Պրոֆսնաբ» ՍՊԸ

3-րդ տեղ «Լուսի-Արեգ» ՍՊԸ

«ԼԵՎՈՆՑ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն և «Պրոֆսնաբ» ՍՊԸ-ն հրաժարվել են պայմանագիր կնքելու առաջարկից /ծանուցումները և պատասխանները կցվում են, առդիր 4 թերթ /: ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01 ծածկագրով գնանշման հարցման պայմանագիր կնքելու առաջարկ ուղարկվել է «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ին:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով

հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 06.11.2020թ.-ին գրությամբ դիմել է «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16727-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով 26.11.2020թ.-ի նիստի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստին՝ չներկայացնելով գրավոր դիրքորոշում:

4. <u>ՍՑ-LO-2020/260 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ռենտգենային սենյակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.09.2020թ.-ին հայտարարվել է «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ն:

ii. «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ն մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և պարտավորվում է ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, հրավերով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացնել գնային առաջարկի չափով որակավորման ապահովում:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 28.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ընտրված /հաղթող/ մասնակից ճանաչել «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ին:

iv. Պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից չի հրապարակվել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը:

v. Պատվիրատուն, էլեկտրոնային փոստի միջոցով, 06.10.2020թ.-ին Մասնակցին ներկայացրել է «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը:

vi. «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ն գրությամբ (հնարավոր չէ պարզել գրության ներկայացման ամսաթիվը) դիմել է Պատվիրատուին հայտնելով հետևյալը. *«ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրում հաշվառվել է 18.05.2020թ.-ին: 21.05.2020թ.-ին հայտարարություն է ներկայացրել հարկային մարմնում միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ, սակայն տեղի է ունեցել թյուրիմացություն և ՍՊԸ-ն մասնակցել է «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար՝ «Քանդման և ապամոնտաժման աշխատանքներ» ձեռքբերման նպատակով հայտարարված գնանշման հարցմանը և գնային առաջարկը ներկայացրել է որպես ԱԱՀ վճարող: Քանի որ տվյալ դեպքում առաջարկված գինը եղել է լավագույնը ՍՊԸ-ն ճանաչվել է հաղթող: Խնդրում եմ չեղյալ համարել մրցույթում մեր ներկայացրած գնային առաջարկը:»:*

vii. Հանձնաժողովի 20.10.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ համաձայն՝ «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր է կնքվել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի հետ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16727-2020 գրությամբ «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է

պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով, եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Այրվածքաբանության ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կողմից ռենտգենային սենյակի վերանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 17.09.2020թ.-ին հայտարարված «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ն Հանձնաժողովի 28.09.2020թ.-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված /հաղթող/ մասնակից: Պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝

www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից չի հրապարակվել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը: Սակայն Պատվիրատուն, էլեկտրոնային փոստի միջոցով, 06.10.2020թ.-ին Մասնակցին ներկայացրել է «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով պայմանագրի նախագիծը և պայմանագիր կնքելու առաջարկը: «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ն գրությամբ դիմել է Պատվիրատուին՝ խնդրելով չեղյալ համարել վերջինիս ներկայացրած գնային առաջարկը: Հանձնաժողովի 20.10.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ համաձայն՝ «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում պայմանագիր է կնքվել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի հետ:

Վերոնշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման հիման վրա՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է որ Պատվիրատուն 06.10.2020թ.-ին Մասնակցին ներկայացնելով «ԱԱԿ-ԳՀԱՇՁԲ-20/09-01» ծածկագրով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը, ապա ստանալով Մասնակցի կողմից գրությամբ ներկայացված վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկը չեղյալ համարելու առաջարկը՝ համարել է այն որպես պայմանագիր կնքելուց հրաժարում, 20.10.2020թ.-ին հրավիրել է Հանձնաժողովի նիստ և պայմանագիր է կնքել «Լուսի-Արեգ» ՍՊԸ-ի հետ, «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ին զրկելով պայմանագիր կնքելու իրավունքից, այն դեպքում, երբ Մասնակցի կողմից պայմանագրի ստորագրված տարբերակը ներկայացնելու համար ծանուցումը ստանալու պահից հաշված՝ Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետը լրանալու էր 20.10.2020թ.-ը ներառյալ:

Ընդ որում, Մասնակիցը մինչև 20.10.2020թ.-ը չի դիմել Պատվիրատուին և չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, այլ ընդամենը ներկայացրել է գրություն՝ գնային առաջարկը չեղյալ համարելու մասին, որպիսի հանգամանքը Հանձնաժողովը չէր կարող գնահատել որպես պայմանագիր կնքելուց հրաժարվելու փաստ և մինչև Մասնակցի կողմից պայմանագրի ստորագրված տարբերակ ներկայացնելու համար Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետի լրանալը՝ 20.10.2020թ.-ը ներառյալ, Հանձնաժողովն իրավասու չէր նիստ հրավիրել և Մասնակցին զրկել պայմանագիր կնքելու իրավունքից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Օրենսդիրը, պայմանագրի ապահովում ներկայացնելու պարտականության կատարման համար սահմանելով այդպիսի պահանջ ստանալու պահից հաշված 10 աշխատանքային օրյա ժամկետ, գնման գործընթացի մասնակիցներին ընձեռել է այն օբյեկտիվ ժամանակահատվածը, երբ վերջիններս կարող են իրացնել Օրենքով և Կարգով սահմանված՝ պայմանագրի և որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորությունները: Ուստի Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով սահմանված պատասխանատվության միջոցները կարող

են ի հայտ գալ միայն սահմանված ժամկետի ավարտմամբ կամ մասնակցի կողմից այնպիսի գործողություններ կատարելու արդյունքում, որոնք վկայում են վերջինիս կողմից պայմանագիր կնքելուց հրաժարվելու մասին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 06.11.2020թ.-ի թիվ 26/26-1/16727-2020 գրությամբ «Լեվոնց Գրուպ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/260 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**